

Խալիբեան դպրոցը, որի վերայ թէև ծախսուում էր ամբողջ թեմի արդիւնքը, բայց նա զարձեալ թուշակատու աշակերտների թուի պակասելու պատճառով փակուեցաւ:

(Իւր շարունակութիւնը):

Ե. Ծ.



ԱՐՄՈՒԻ ԲՈՅՆԸ.

ԶՐՈՅՑ ԲԻՕՐՆՍՏԻՆԵՐՆԷ—ԲԻՕՐՆՍՏՈՆԷ:

Լնդերէզաարդէն կոչուում էր միւս գիւղերից հեռու ընկած և բարձր սարերով շրջապատուած մի գիւղ, նա շինուած էր հարթ հաւասար և պողաբեր հովտում, որ սարից վաղող գետով երկու մասի էր բաժանուած: Այդ գետը թափուում էր մի ուրիշ մեծ գետի մէջ, որ գտնուում էր գիւղի մօտ և մի քանի մղոն տարածութեան վրայ երևում էր այդ տեղից:

Այդ գետի հոսանքովն ի վեր երբեմն նաւակով մի մարդ բարձրացաւ, որ առաջին անգամն էր գալիս այդ հովիտը—նորա անունն էր Էնդրէ, և հիմայ այս տեղ ապրում էին նորա սերունդները: Մի քանիսն ասում էին թէ նա եկել էր այստեղ, որ իւր գործած մարդասպանութեան հետևանքից փախչելով ազատուի, դորա համար էլ նորա սերունդը այդպէս մնայլ էր: Միւսները հաստատում էին, որ այդ մնայլութեան պատճառը բարձր ժայռերն են, որոնք Հոգեգալստին էլ չէին թողնում, որ արևի ճառագայթները, կէսօրուայ հինգ ժամից յետոյ, անցնեն հովիտը:

Գիւղի վրայ կախուած էր մի արծուի բոյն, նա կպած էր սարերի միջից բարձրացող մի ժայռից, բոլորն էլ տեսնում էին, թէ ինչպէս էգ արծիւը թուխս էր նստում, բայց ոչ ոք չէր կարողանում մօտենալ նորան: Իսկ որձը պտտուում էր գիւղի վրայ, արագ իջնում էր ցած և կամ գառն կամ ուշ էր թռչնում: Միանգամ էլ մի երեխայ վերցրեց և տարաւ: Իորա համար էլ ոչ ոք իրան հանգիստ չէր զգում: Քանի որ արծիւը մնում էր հաստատ ժայռի ծայրին գտնուող բոյնի մէջ, Թողովորդի մէջ աւանդութիւն կար, որ երբեմն, շատ վաղուց, այստեղ երկու եղբայրներ էին ապրում: Որոնք բարձրացան վերև և քանդեցին բոյնը: Բայց հիմայ ոչ ոք չէր կարողանում նորան մօտենալ:

Բաւական էր, որ երկու մարդ Էնդրէզաարդէնում իրար հանդիպէին և ահա նոքա իսկոյն սկսում էին արծուի բոյնի մասին խօսել և վերև նայել: Գիւղի բոլոր բնակիչները գիտէին, թէ երբ են ար-

ծիւները վերագառնում, որտեղ են իջնում և որ տեղ վնաս տալիս, և ո՞վ էր վերև բարձրանալու վերջին փորձ անողը: Երիտասարդները մանկութիւնից վարժուում էին սարերի և ժայռերի վրայ բարձրանալ, ամրացնում էին իրանց ոտները և ձեռները, որ երբ և իցէ այն երկու եղբայրների նման բարձրանան ժայռի ծայրը և բոյնը ոչնչացնեն:

Այն ժամանակ, որի մասին մենք խօսում ենք, ամենալաւ պատանին կոչուում էր Լէյֆ և Էնդրէի սերնդին չէր պատկանում: Նա գանգուր մազեր և փոքր աչքեր ունէր, շատ ուրախ մարդ էր և կանանց շատ էր սիրում: Դեռ մանկութիւնից նա հաւատացնում էր, որ անպատճառ մի ժամանակ կը քանդէ արծուի բոյնը, բայց ծիրերը պատասխանում էին, որ այդպիսի բաների վրայ պէտք չէ բարձր խօսել:

Այդ աւելի էր գրգռում նորան և ահա մի անգամ, երբ նա զարգացել ու զօրացել էր, նա վճռեց կատարել իւր որոշումը: Ամառուայ սկզբի մի պայծառ կիւրակէ առաւօտ էր, արծուաձագերը նոր էին ձուից դուրս եկել, Թողովորդը մեծ բազմութեամբ հաւաքուել էր ժայռերի տակ՝ նայելու: Ծերերը խորհուրդ էին տալիս Լէյֆին հրաժարուել իւր մտադրութիւնից, երիտասարդներն ընդհակառակը զրգում էին նորան: Սակայն նա իրանը արեց, առանց մէկին լսելու: Սպասեց մինչև արծուամայրը բոյնից դուրս թռաւ, յետոյ նա մեծ թռիչք արեց դէպի վեր և ծառի ճիւղերից բռնեց: Այդ ծառը բուսած էր ժայռի ճեղքումքի մէջ և այդ ճեղքով նա սկսեց բարձրանալ դէպի վեր: Փոքրիկ քարերը պոկուում էին նորա ոտների տակ, հողի կտորները թափուում, ընկնում էին ներքև: Գորանից զատ չուրջը ոչինչ չէր լսուում: Միայն գետի կամացուկ խշշոցն էր, որ սարից իջնում էր հովիտը, ժայռը աւելի ու աւելի զառկայր էր դառնում: Լէյֆը ըստիպուած էր լինում մի ձեռով երկար ժամանակ կախ ընկած մնալու, ոտով որոնելով ամուր հողը, որ նորա աչքերը չէին կարող տեսնել: Շատերը, մանաւանդ կանայք, երեսները յետ դարձրին, ասելով, որ նա երբէք այդ չէր անիլ, եթէ նորա ծընողները կենդանի լինէին: Վերջապէս նա գտաւ մի յենակէտ և նորից սկսեց որոնել մերթ ձեռով, մերթ ոտով, թէ որտեղից կարող էր բարձրանալ, որտեղ պոկ եկան, նա սայթաքուեց, բայց կրկին ամուր բռնեց ժայռից, ծածուկ կանգնածները լըսում էին միմեանց ծանր շնչառութիւնը: Այդ բոլոր պէին վերկացաւ մի երիտասարդ աղջիկ, որ նստած էր միւսներից հեռու: Քարի վրայ, ասում էին, որ նա մանկութիւնից խօսք էր տուել Լէյֆին, թէ և վերջինս Էնդրէի սերնդին չէր պատկանում: Զեռ-

ներն առաջը մեկնելով նա աղաղակեց. «Լէյֆ, Լէյֆ, ինչե՞ս ես դու այդ անում: Լմեցող ժողովուրդը յետ նայեց: Հայրը կանգնած էր նորա մօտ և խստութեամբ նայում էր նորա վրայ: Բայց աղջիկը չէր նկատում այդ: «Իջի՛ր, Լէյֆ, աղաղակեց նա—ես քեզ սիրում եմ: Իսկ այդտեղ վերեւից դու ոչինչ օգուտ չես ունենայ: Երեւում էր որ Լէյֆը կանգ առաւ՝ մտածմունքի մէջ ընկնելով: այդ տեսեց մէկ կամ երկու րոպէ: յետոյ նա սկսեց նորից վեր բարձրանալ: Նորա ձեռներն ու ոտներն ամուր էին, այնպէս որ մի առ ժամանակ ամէն բան լաւ էր գնում: Բայց շուտով նա սկսեց յոգնել: այդ երեւում էր նորանից, որ նա յաճախ կանգ էր առնում հանգստանալու: Մի փոքրիկ քար պոկուեց և գլորուեց ներքե կնչպէս մի նշան: բոլոր ցածում կանգնածները հետեւում էին նորան, մինչև որ վայր ընկաւ: Մի քանիսը չկարողացան դիմանալ այդ տեսարանին և հեռացան: Աղջիկը դեռ շարունակում էր կանգնած մնալ մենակ՝ բարձր քարի վրայ: Նա կոտորաւում էր ձեռները և վեր էր նայում: Լէյֆը սկսեց իւր առաջը ձեռքով գնել: ձեռք պոկ եկաւ: աղջիկը այդ պարզ տեսնում էր: տղան ուղեց միւս ձեռով բռնել: միւսն էլ պոկուեց: «Լէյֆ, այնպէս բարձր ճչաց աղջիկը, որ նորա ձայնը լսուեց հեռու յիռներում: միւսները ճչացին նոյնպէս: «Նա ցած է սողում» կրկնում էին նոքա և մեկնում էին դէպի նա իրանց ձեռները թէ մարդիկ և թէ կանայք: Նա ձիւտ որ սողում էր ցած իւր հետ քաշելով աւաղ: քարի հող: սողում էր աւելի ու աւելի տրագ: Ժողովուրդը երեսը յետ դարձրեց: Նոքա շուտով լսեցին իրանց յետևից խշշոց, ձայնիւն և վերջապէս մի ձանր բանի վայր ընկնելը, ինչպէս մի մեծ կտոր՝ թաց հողի:

Երբ վերջապէս ժողովուրդը արեց սիրտ յետ նայել, տեսաւ նորան ջարդուած և անձանաւելի: դետնի վրայ փռուած: Աղջիկը անզգայ ընկած էր քարի վրայ: Հայրը տուն տարաւ նորան:

Երիտասարդները, որ ամենից շատ էին գլորում նորան դէպի այդ քաջագործութիւնը, հիմայ չէին համարձակուում մօտենալ նորան և օգնել: Հատեն էլ չէին կարողանում նոյն իսկ նայել նորան: Երբերը պիտի բանի կենային: Գոցանից ամենանամեղը նորան բարձրացնելով ասաց. «Այս մի անմտութիւն էր, սակայն,—աւելացրեց նա վերև նայելով—էլի լաւ է, երբ կայ գոնէ այնքան բարձր կանգնած մի բան, որ նորան ամէն ձեռ հասնել չէ կարող»:

Մ Ե Ն Բ Ե Լ Ո Ւ Բ Ե:

Գ Ռ Տ Ն Ա Կ Ա Ն:

Մ ա ռ ղ և ա յ ի ն ց ե ղ ը մ ա ն ր ա ն լ մ է: — Դուկտոր Դանաւէ մանրագնէն ուսումնասիրութեամբ պարզում է, որ մարդկային ցեղը քանի գնում մանրանում է: Նա իւր ուսումնասիրութեան համար վերցրել է Եւրոպական զանազան պետութիւնների մէջ գիտնորակոյն ննթար-կոտողների հասակը: մինչ առաջ գիտնոր էին վերցնում որոշեալ հասակ ունեցողներին, այժմ արդէն սակայնամ են հասակի շախի փոքրացնել: որպէս զի կարելի լինի զօրք ժողովել: Այդ երեսիցը բացատրում են նրանով, որ այժմ Ֆիզիքական մարզողութիւնների վերայ առանձին ուշադրութիւն չեն դարձնում: եւ շարքի առաջն աննելու համար առաջարկում են ուսումնարանական ծրագրերի մէջ Ֆիզիքական կրթութիւնը պարտադիր դարձնել:

Պ ո մ ա է յ ի ք ա ղ ա ք ի ա է ղ ու մ ն և ր է: 79 Թուականին Քրտտոյից առաջ վեզուլի լերան հարուստ լատիոյ ծածկեց Հոովմայեցոց երկու գեղեցիկ քաղաքները: Պոմալէյի եւ հերքուլանում, որոնք գտնուում էին Ոստաւայ արեւմտեան կողմում: Ապէնան Թերակոլում: Անցնում են շատ դարեր, մինչև որ այդ ողողումը քաղաքները XVI-րդ դարում գրաւում են մարդկանց ուշադրութիւնը: 1689 թ. նա դառնում է գիտնականների ուսումնասիրութեան առարկայ, իսկ 1748 թ. մինչև այսօր շարունակուում են պեղումները: Եւ ինչպիսի Թանգագին հնութեան յիշատակներ են բացուում այդ մեծած քաղաքի մէջ: Այդ պեղումների հիման վերայ պատմաբանները կարողանում են վերականգնել հին գիտութիւնը, գեղարուեստը, ներքին կեանքը: «Նորերս էլ Մարկիզ Նադալեաք Correspondens ամսագրի յոնուարի համարում գեղեցիկ յօդուած է նուիրել Պոմալէյի քաղաքի հասարակական կեանքի մասին: Երևում է, որ Պոմալէյ շատ կենդանի եւ քաղաքաւոր քաղաք է: Եղած, զուարճութիւնների եւ ուրախութիւնների մի տեսակ կենդանութիւնը—ինչպէս այժմ՝ Նիցցան կամ Մօնաէ Կառլոն: Հասան ծածկել է ուրախ քաղաքը ուրախացող մարդկանց հետ միասին հէնց այն ժամանակ, երբ սրանք քաղաքական ընտրութիւնների էին պատրաստուում: Այդ ժամանակ դեռ նոր էր հրատարակուել Սուլլայի օրէնքը, որով Դուալիայի քաղաքներում Թոյլատրուում էր մոցնել Նոյնպիսի քաղաքային կազմակերպութիւն, որպիսին էր Հոովմում: ինչպէս երևում է ամբողջ Պոմալէյում ընակիչները զբաղուած էին քաղաքային վարչութեան անդամների նախապատրաստական ընտրութիւններով: Քաղաքի պատերը և ն (Դուալիայի) — մանրագիր յայտարարութիւններով, որոնցից երևում է, թէ ո՞ր ում է առաջարկում: այսպիսի գորութիւններ ու կանդիդատներ առաջարկելու ամէն ոք իրաւունք ունէր: մինչև անգամ կանայք եւ տղայք: Դրանից յետոյ նշանակում են արդէն իսկական ընտրութիւնները, որտեղ քուէարկուում են մեծաւ մասամբ—միայն նրանք, որոնք Գուալիպիտոնիքից կարող են տեսնել որ մեծամասնութիւնը իրանց կողմն է: Ընտրութեան ժամանակ երևում է, որ մեծ դեր էին խաղում գող-դուլիները (Կոռպորացիոն) եւ ակմբանոցները, որոնք, ի դէպ ասած, տարօրինակ անուններ էին կրում: ինչպէս օրինակ «Փոքրիկ գողերի», «Հնկուտ տղերանց», «քարի ուրախակցների» եւ այլն: Այսպէս պեղումները մեր առաջ կարողանում են պատկերացնել անցած գիացած դարերի՝ կեանքը, ուրախութիւնը, հակումները եւ այլն եւ այլն:

Ուրեմն որքան մեծ նշանակութիւն ունին հագիտական պեղումները առհասարակ եւ մասնաւոր մեր հայրենիքում, որտեղ այնքան շատ են գետնի տակ մնացած յիշատակներ մեր հին փառքի եւ այնքան քիչ մարդիկ կան նրանց մնացն մոռանող, իոգս քաղող: Եւտերից յիշենք